ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-03/19» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Մեծամոր

08.08.2019թ.
Ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար - Նինա Թադևոսյանը,
Գնահատողներ՝
Աշխատակազմի գլխավոր մասնագետ - Սարգիս Սահակյանը,
Աշխատակազմի առաջատար մասնագետ - Վարդգես Դաբաղյանը,
Գնումները համակարգող՝
Արտյոմ Գևորգյանը:

«ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-03/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Գևորգյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված համապատասխան եզրակացության քննարկման և ընտրված մասնակիցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված համապատասխան եզրակացության քննարկման և ընտրված մասնակիցին հայտարարելու մասին.

(Ա.Գևորգյան)

1.1 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Սյունիք» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

1.2 31.07.2019թ-ին գնումների համակարգող Ա.Գևորգյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ Agnumner@mail.ru էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակցը ուղարկել է վերը նշված փաստաթղթերը, որոնք հանձնաժողովի կողմից ուսումնասիրվելուց հետո գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող /բավարար/:

1.3 08.08.2019թ. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց **«Սյունիք» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը փասաթղթերը գնահատել համապատասխան «**ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-03/19**» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Հանձնաժողովը որոշեց հաստատել «**ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-03/19**» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Գևորգյան)

2.1 «**ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-03/19**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 16:00-ին, ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	_____	Ն. Թադևոսյան
Գնահատող	_____	Ս. Սահակյան
Գնահատող	_____	Վ. Դաբաղյան
Գնումները համակարգող	_____	Ա. Գևորգյան